ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18-19-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

25 հոկտեմբերի 2018թ. ք. Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ. ՍԻՆՈՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ռ. Դալլաքյան
Հ. Բաբայան
Հ. Իգիթյան
Բ. Ղալոյան

Հրավիրված (քարտուղար)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 21/10/18թ. «Ալաշկերտ»-«Գանձասար-Կապան» (ԲԽ048) խաղին «Գանձասար-Կապան» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Տերտերյանի (N 11956) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար) /զեկուցող Բ. Ղալոյան/

2. 20/10/18թ. «Փյունիկ-2»-«Գանձասար-Կապան-2» (ԱԽ066) խաղին «Գանձասար-Կապան-2» թիմի ֆուտբոլիստ Մհեր Սարգսյանի (N 24953) հեռացման մասին (լուրջ կոպիտ խաղի համար) /զեկուցող Բ. Ղալոյան/

3. 21/10/18թ. «Երևան»-«Լոկոմոտիվ» (ԱԽ065) խաղը չի կայացել (շտապօգնության բժիշկը հրաժարվել է ստորագրել խաղի սպասարկման հավաստագիրը, դեֆիբրիլյատորի անսարքության պատճառով) /զեկուցող Բ. Ղալոյան/

4. 17/10/18թ. «Ալաշկերտ-03»-«Աղբյուրակ-03» (16Բ-013) խաղին «Ալաշկերտ-03» թիմի ֆուտբոլիստ Ալբերտ Սուքիասյանի (N 22469) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար) /զեկուցող Բ. Ղալոյան/

5. 17/10/18թ. «Մարտունի-04»-«Գորիս-04» (15Բ1-012) խաղին «Գորիս-04» թիմի ֆուտբոլիստ Արսեն Մինասյանի (N 29995) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար) /զեկուցող Բ. Ղալոյան/

6. 18/10/18թ. «Գանձասար-Երևան-03»-«Բանանց-03» (16Ա-048) խաղին «Գանձասար-Երևան-03» թիմի ֆուտբոլիստ Էդգար Եղյանի (N 28671) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար) /զեկուցող Բ. Ղալոյան/

7. 22/10/18թ. «Փյունիկ-2-09»-«Բանանց-1-09» (10Ե1-010) խաղը անավարտ մնալու մասին (ծեծկռտուք, մրցավարի հասցեին հայհոյանքներ և հարվածներ) /զեկուցող Բ. Ղալոյան/

8. «Արտաշատի համալիր մարզադպրոց» ակումբը Արտաշատ-03 թիմում կեղծված փաստաթղթերով ֆուտբոլիստների խաղացնելու մասին /զեկուցող Բ. Ղալոյան/

9. «Վարդենիսի թ.1 մարզադպրոց» ակումբը Անդրանիկ-05 թիմում կեղծված փաստաթղթերով ֆուտբոլիստների խաղացնելու մասին /զեկուցող Բ. Ղալոյան/

10.1. 20/10/18թ. «Շիրակ»-«Արարատ» (ԲԽ046) խաղին (խախտվել է 2018-2019թթ. պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի հոդված 16-ի 1-ին կետը) մասին /զեկուցող Բ. Ղալոյան/

1. **21/10/18թ. «Ալաշկերտ»-«Գանձասար-Կապան» (ԲԽ048) խաղին «Գանձասար-Կապան» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Տերտերյանի (N 11956) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար)**

ՈՐՈՇՎԵՑ `

21/10/18թ. «Ալաշկերտ»-«Գանձասար-Կապան» (ԲԽ048) խաղին «Գանձասար-Կապան» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Տերտերյանին (N 11956), ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Գանձասար-Կապան Ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 ՀՀ դրամ:

2. **20/10/18թ. «Փյունիկ-2»-«Գանձասար-Կապան-2» (ԱԽ066) խաղին «Գանձասար-Կապան-2» թիմի ֆուտբոլիստ Միեր Սարգսյանի (N 24953) հեռացման մասին (լուրջ կոպիտ խաղի համար)**

ՈՐՈՇՎԵՑ `

20/10/18թ. «Փյունիկ-2»-«Գանձասար-Կապան-2» (ԱԽ066) խաղին «Գանձասար-Կապան-2» թիմի ֆուտբոլիստ Միեր Սարգսյանին (N 24953), ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 16-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ որակազրկել 5 խաղով, Գանձասար-Կապան Ֆուտբոլային ակումբին տուգանել 100000 ՀՀ դրամ:

3. **21/10/18թ. «Երևան»-«Լոկոմոտիվ» (ԱԽ065) խաղը չի կայացել (շտապօգնության բժիշկը հրաժարվել է ստորագրել խաղի սպասարկման հավաստագիրը, դեֆիբրիլյատորի անսարքության պատճառով)**

ՈՐՈՇՎԵՑ `

21/10/18թ. «Երևան»-«Լոկոմոտիվ» (ԱԽ065) խաղը չկայանալու պատճառով, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ Երևան թիմին (ԱԽ065) խաղում գրանցել տեխնիկական պարտություն, ՖԱ Երևան ակումբին տուգանել 150000 ՀՀ դրամ:

4. **17/10/18թ. «Ալաշկերտ-03»-«Աղբյուրակ-03» (16Բ-013) խաղին «Ալաշկերտ-03» թիմի ֆուտբոլիստ Ալբերտ Սուքիասյանի (N 22469) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար)**

ՈՐՈՇՎԵՑ `

17/10/18թ. «Ալաշկերտ-03»-«Աղբյուրակ-03» (16Բ-013) խաղին «Ալաշկերտ-03» թիմի ֆուտբոլիստ Ալբերտ Սուքիասյանին (N 22469), ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Ալաշկերտ Ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 ՀՀ դրամ:

5. **17/10/18թ. «Մարտունի-04»-«Գորիս-04» (15Բ1-012) խաղին «Գորիս-04» թիմի ֆուտբոլիստ Արսեն Մինասյանի (N 29995) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար)**

ՈՐՈՇՎԵՑ `

17/10/18թ. «Մարտունի-04»-«Գորիս-04» (15Բ1-012) խաղին «Գորիս-04» թիմի ֆուտբոլիստ Արսեն Մինասյանին (N 29995), ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Գորիսի մպ/մդ. ակումբին տուգանել 3000 ՀՀ դրամ:

6. **18/10/18թ. «Գանձասար-Երևան-03»-«Բանանց-03» (16Ա-048) խաղին «Գանձասար-Երևան-03» թիմի ֆուտբոլիստ Էդգար Եղյանի (N 28671) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար)**

ՈՐՈՇՎԵՑ `

18/10/18թ. «Գանձասար-Երևան-03»-«Բանանց-03» (16Ա-048) խաղին «Գանձասար-Երևան-03» թիմի ֆուտբոլիստ Էդգար Եղյանին (N 28671), ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, Գանձասար ֆուտբոլային ակումբին տուգանել 2000 ՀՀ դրամ:

7. **22/10/18թ. «Փյունիկ-2-09»-«Բանանց-1-09» (10Ե1-010) խաղը անավարտ մնալու մասին (ծեծկռտուք, մրցավարի հասցեին հայհոյանքներ և հարվածներ)**

ՈՐՈՇՎԵՑ `

1. 22/10/18թ. «Փյունիկ-2-09»-«Բանանց-1-09» (10Ե1-010) խաղի ժամանակահատվածում կարգ ու կանոն չապահովելու համար, որի հետևանքով խաղը մնացել է անավարտ, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 15-րդ կետի համաձայն `«Փյունիկ-2-09» թիմի երեք տնային խաղեր անցկացնել առանց հանդիսատեսի, Փյունիկ ՖԱ ՀԿ ակումբին տուգանել 10000 ՀՀ դրամ:
2. 22/10/18թ. «Փյունիկ-2-09»-«Բանանց-1-09» (10Ե1-010) խաղի ժամանակահատվածում մրցավարին հայհոյելու և հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 32-րդ կետի համաձայն՝ Բանանց ՖԱ ակումբի մարզիչ Արտյոմ Առաքելյանին (677) հայտարարել “անցանկալի անձ” (“պերսոնա նոն գրատա”):

8. **«Արտաշատի համալիր մարզադպրոց» ակումբը Արտաշատ-03 թիմում կեղծված փաստաթղթերով ֆուտբոլիստների խաղացնելու համար**

ՈՐՈՇՎԵՑ `

1. «Արտաշատի համալիր մարզադպրոց» ակումբի «Արտաշատ-03» թիմում կեղծված ծննդականի փաստաթղթերով ֆուտբոլիստներ՝ Մուշեղ Ղազարյանին /29280/, Սուրեն Մոսոյանին /29281/ և Նարեկ Էմիշյանին /29279/ Մ-16Ա առաջնությունում 7 խաղ խաղացնելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ «Արտաշատ-03» թիմին գրանցել տեխնիկական պարտություններ, պատասխանատու մարզիչ Թելման Ցաղմուրյանին /11003/ որակազրկել 3 տարի ժամկետով: Արտաշատի համալիր մարզադպրոց ակումբին տուգանել 150 000 ՀՀ դրամ:

2. «Արտաշատի համալիր մարզադպրոց» ակումբի «Արտաշատ-03» թիմը, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ հանել Մ-16Ա առաջնությունից, «Արտաշատի համալիր մարզադպրոց» ակումբը տուգանել 50000 ՀՀ դրամ:

9. «Վարդենիսի թ.1 մարզադպրոց» ակումբը Անդրանիկ-05 թիմում կեղծված փաստաթղթերով ֆուտբոլիստների խաղացնելու համար

ՈՐՈՇՎԵՑ՝

«Վարդենիսի թ.1 մարզադպրոց» ակումբը «Անդրանիկ-05» թիմում Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա. Հարությունյանի և Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն Ա. Խոջաբեգյանի կողմից տրված կեղծ տեղեկանքների փաստաթղթերով ֆուտբոլիստներ Արգիշտի Սողոմոնյանին /32225/, Էդգար Գրիգորյանին, /32230/ և Նարեկ Մարգարյանին /32948/ Մ-14Բ1 առաջնությունում խաղացնելու համար՝ ՀՖՖ-ի Կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն նշված ֆուտբոլիստների մասնակցած 14Բ1-008, 14Բ1-009 խաղերում «Անդրանիկ-05» թիմին գրանցել տեխնիկական պարտություններ, մրցակից թիմերին գրանցել տեխնիկական հաղթանակ: «Անդրանիկ-05» թիմի պատասխանատու մարզիչ Սամվել Ասատրյանին /5222/ որակազրկել 3 տարի ժամկետով: «Վարդենիսի թ.1 մարզադպրոց» ակումբին տուգանել 150000 ՀՀ դրամ:

10.1. 20/10/18թ. «Շիրակ»-«Արարատ» (ԲԽ046) խաղին (խախտվել է 2018-2019թթ. պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի հոդված 16-ի 1-ին կետը)

ՈՐՈՇՎԵՑ՝

ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 35-րդ կետի համաձայն՝ Արարատ ֆուտբոլային ակումբին տուգանել 10 000 ՀՀ դրամ:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Բ. ՂԱԼՈՅԱՆ